

ՄԻՋԱԳԵՏՔ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ

Տր. Ֆ. Ռ. Մարթին կը գրէ որ «Արար ճեղինակները շատ բան չունին բնելու այս ճարտարարուեստին մասին վերի Միջագետքի, Հայաստանի եւ արեւելեան Փոքր Ասիոյ մէջ: Մուգատասի կը վկայէ որ Ամիրթ (Տիարպէքեր) նշանաւոր էր բրդեայ իրերուն համար, որոնք մեծ մասամբ կ'արտածուէին»⁽⁴⁴⁾:

Ասիկա սակայն ճիշդ չէ, քանի որ յարգելի ճեղինակին միայն պակսեր են կարեւոր եւ բազմաթիւ վկայութիւններ: Մենք արդէն բաւական բան ներկայացուցած ենք հոս Արար ճեղինակներէ քաղուած:

Տեսանք արդէն թէ Սարկոնի օրով դեռ, 714 Քրիստոսէ առաջ, Հայաստան կը վայելէր հիւսուածեղէնի, ինչպէս նաեւ որդանի արտադրութեան մեծ համբաւ: Ռատլինսըն կը վկայէ որ հին Պարսկաստանը Բարբելոնէն կը ստանար իր գորգերը, որոնք արգարեւ հոն ալ կ'արտադրուէին: Նոյն բազմահմուտ ճեղինակը կ'ըսէ որ «Բարբելոնցիներու մեծ թիւ մը գրադած էր հիւսուածեղէններու արտադրութեամբ, մասնաւորաբար գորգեր եւ մուսուլին, որոնք Բարբելոնցիք կ'արտադրէին ոչ միայն իրենց կարիքներուն համար, այլ նաեւ օտար երկիրներու մէջ սպառման համար»⁽⁴⁵⁾: Բարբելոն բերուած ամէն տեսակ ապրանք «բերուած կ'երեւան օտար վաճառականներու շնորհիւ, քան թէ ներածուած բնիկ առեւտրականներու ջանքերով, Հայեր, Փիւնիկեցիք, եւ գուցէ Յոյները, իրր իրենց ապրանքները բերելու միջոց գործածեցին Եփրատի հոսանքը»⁽⁴⁶⁾: Եւ նոյն ճեղինակը կ'աւելցնէ. «Այժմեր ալ կը տեսնուին յաճախ իրր գոհ (Բարբելական յիշատակարաններու մէջ), եւ հաւանաբար ատոնք ոչխարէն աւելի հաւարակ էին, ամէն պարագայի տակ՝ զոնէ հարաւային շրջաններու մէջ: Բարբելական ոչխարէն ներկայացուցիչ կը պակսի բացարձակապէս յիշատակարան — քանդակներուն մէջ, բայց հազիւ հաւանական ըլլայ որ երբ երկիր մը այնքան առատօրէն բուրդ կը գործածէր, պիտի գոհանար առանց անոնց (ոչխարներու) ըլլալուն: Սակայն ամէն գնով ատոնք առատօրէն կը գտնուէին գաւառներուն մէջ, կազմելով գլխաւոր հարստութիւնը աւելի հիւսիսային ազգերու»⁽⁴⁷⁾:

Դժուար թէ բուրդ չունեցող երկիր մը, ինչպէս էր եւ է պատմական Բարբելոնը, կարենար զարկ տալ գորգագործութեան կամ ուրիշ բրդեայ հիւսուածեղէններու՝ եթէ առատօրէն բուրդ չունենար իր

⁽⁴⁴⁾ Oriental rugs... p. 88.

⁽⁴⁵⁾ The Seven Great Monarchies, p. 218.

⁽⁴⁶⁾ Անդ, էջ 219:

⁽⁴⁷⁾ Անդ, էջ 162: